

ԵՐԵՎԱՆԻ ԴՈՒՆԻՔԻ ԴԱՐԱՆ

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է: Կես տարեկանը 5 ռուբլի:
Առանձին համարները 10 օրվա ընթացքում:
Քիչ քանակությամբ համարները:
Մեր հասցեն՝ Тифлис, редакция «Мелік»
Сербская ул., № 5:
Կամ Tiflis, Rédaction «Mschak»
Խրապրատան տեղի է Գ օ Ն № 253:

Խմբագրությունը ըստ է առաջատար 10-2
(բացի կիրակի և տոն օրերից):
Յայտարարությունները ընդունվում են ամեն ինչով
Յայտարարությունների համար վճարում են
իրաքանչիւր տողատեղին 20 կոպեկ:
Խմբագրատան տեղի է Գ օ Ն № 253:

ՀԱՆՈՒՆԴԱՐԱՆ 25 հատ 38 կոպ.	ՕՐԱՆՆԻԿ 25 հ. 25 կ., 10 հ. 10 կ.	Ի Դ Ե Մ 25 հ. 15 կ., 10 հ. 6 կ.	ՌԵՆՈՒՄԷ 10 հատ 5 կ.	ՇԻՐԱԿ 10 հատ 3 կ.	ԶՎՈՆ 20 հատ 5 կ.
ԱՐՏԻՍՏԻԿ 25 հատ 30 կ.	Ե Մ Ի Մ 25 հ. 25 կ., 10 հ. 10 կ.	ՀԱՆՈՒՆԴԱՐԱՆ 25 հ. 15 կ., 10 հ. 6 կ.	ՕՖԻՑԵՐՍԿԱՅԱ 25 հ. 15 կ., 10 հ. 6 կ.	ՐՕՍԿՈՐ 25 հ. 10 կ., 10 հ. 6 կ. և 10 հ. 4 կ.	Է Խ Օ 20 հատ 5 կ.
ԽԱՆԿԵՓԻ 25 հատ 30 կ.	ՎԵՆԵՐԱ 25 հ. 15 կ., 10 հ. 6 կ.	ՓՈՒՐՈՐ 25 հ. 15 կ., 10 հ. 6 կ.	ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է	ՄԻՆԻՐ 25 հ. 15 կ., 10 հ. 6 կ.	ԲԱՐԲԱ 20 հատ 5 կ.
					ՍՎԵՏ 20 հատ 6 կ. 1401. 1-1

ՄԵԼԻԿ

ԳԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԱՌԱՋԻՆԿՈՒՄ 1911 ԹԻՖԼԻՍԻ ԶԱՄԱՐ

(39-Բ Գ ՏԱՐԻ)

ԲԱՆԴԱՐԱՆԻ ԳՐԱՆԻՑ. «Մելիկ» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսվանը՝ 9 ռ., 10 ամսվանը՝ 8 ռ., 9 ամսվանը՝ 7 ռ., 8 ամսվանը՝ 6 ռ., 7 ամսվանը՝ 5 ռ., 6 ամսվանը՝ 4 ռ., 5 ամսվանը՝ 3 ռ., 4 ամսվանը՝ 2 ռ., 3 ամսվանը՝ 1 ռ. 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պատի ծախսը:
Ընդհանուր թվով տարեկան 6 դրամ. Սերգեյի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պատկերասրահի բաժանորդները՝ 10 ռուբլի. Քիչ քանակությամբ համարները՝ 120 դրամ:
Հասցեները փոխելու համար պետք է ուղարկել նամ. ինքն հասցեն, և միևնույն ժամանակ 40 կոպ. նամակագրությամբ:
Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիկական անյարմարություններ, որոնք զրկում են խմբագրությանը հնարավորությունը լույսարժիվ և լի կանոնադրապես թերթի ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղորոք դիմել՝ գրելով հասցեները պարզ և ճշգրիտ:
Հին բաժանորդներից խնդրվում է կայացնել փոխադր. բանկի վրա նախկին տվյալները հասցեն իր վրա ունեցած համարով:
Մեր հասցեն՝ ТИФЛИС, Редакция «МЕЛИК». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK»:
ԱՊՍՏՈՒԿ ԲԱՆԴԱՐԱՆԻ ԳՐԱՆԻՑԻ ԶԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ներքին գրասենյակներ, այլ ուրիշ բաժանումներ:
Մենք խնդրում ենք այդպիսի հարցերում յանձնարարել առևտրական տներին յանձնել մեզ գումարը թիֆլիսի բանկից մեկի միջոցով, որպեսզի մենք ապահովենք առևտրի գրասենյակներին:
Նորից խնդրում ենք հասցեների վաղորոք առաքման մասին:
ԲԱՆԴԱՐԱՆԻ ԳՐԱՆԻՑԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄ ԿՈՂՄԱՐՈՒՄ

Երեկ երեկոյան ստացանք Մոսկվայից մեր սեփական թղթից հետևյալ ազդեր ընդհանուր թվով բաժանորդների մասին վերին աստիճանի միջնորդական և ուղարկող հեռագրեր:
Մոսկվա, 20 դեկտ. 1 ժ. 31 ր. ցերեկ:
Նորից վախճանված Ամանաս Ժամհարեանը կտակել է 250,000 ռուբլի կովկասում բարձրագույն գերատեսչական դպրոց հիմնելու համար:
Առ-Ձեյն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԶԵՐԱՄԵՆԻՑ
I
Էջմիածին, 19 դեկտ. 5 ժամ 45 ր. երեկ:
Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթեոս Իգնիլոսյանի մարմինը յուզարկաւորությունը դեպի Մայր Տաճար տեղի ունեցավ շաբաթ օր, դեկտեմբերի 18-ին, ցերեկվայ 3 ժամին:
Ներկայ էին Վրաստանի էկզարխի ներկայացուցիչները:
Այսօր, հանդիսաւոր պատարագը Մայր Տաճարում սկսվեց առաւօտեան 9 ժամին:
Պատարագ մատուցեց և օծման կարգը հանդիսաւոր կերպով կատարեց Կաթողիկոսական տեղապահ Գեորգ արքեպիսկոպոս Սուրենյան, համայն հոգեւորականութեան հետ միասին:
Ներկայ էին՝ Փոխարքայի օգնական սենյակատիր Վատացի, գնդալիմաւոր Լազարեան, Երանեան հաճախակիտ կուս Տիգրանուղեն, միսիստների խորհրդի նախագահ Ստոյկովիչի կողմից կովկաս ուղարկված պաշտօնեային Պետրով, Վրաց ազնուականութեան պարագլուխ Սաբինով, գնդապետական և քաղաքացիական աստիճանաւորներ և պաշտօնեաներ, 120 պատգամաւորներ, ժողովրդի ահագին բազմութիւն, հանգուցեալ Մատթեոս Իգնիլոսյան կաթողիկոսի մարմինը դադարի մէջ զգեստաւորված էր:
Արժանատի պահներին թիւը հասնում էր 20-ի, նշանց մէջ պահներ կային՝ Փոխարքայի, ազնուականութեան, քաղաքների և հասարակութիւնների կողմից:
Թաղումը վերջացավ ցերեկվայ 6 ժամ 1-ին:
Կարգապահութիւնը օրինակելի էր:
Կաթողիկոսական տեղապահ Գեորգ արքեպիսկոպոսը արտասանեց քաղոյ, որի մէջ թեւց հանգուցեալ Վեհափառի բարձր արժանաւորութիւնները:
Հայ հոգեւորականութիւնից յետոյ, որոնց եկեղեցու և իշխանութեան ներկայացուցիչները երկրպագութեամբ մօտեցան և համբուրեցին հանգուցեալ Վեհափառի աջը: Այդ տեսարանը գործեց խոր տպաւորութիւն ժողովրդի վրա:
Այնուհետեւ տեղի ունեցավ հոգեհայտ, ներկայութեամբ յիշեալ անձնաւորութիւնների:
Տեղապահը հանգուցեալ Վեհափառ Կաթողիկոսի կենսագրականից յետոյ, ստաց ճառ, օրհնեց Մեն ձայնաւոր Նիկոլայ Ս Թագաւոր Կայսրին,

Կայսրուհուն, Թագաւորանդին, կովկասեան Փոխարքային, շնորհակալութիւն յայտնեց Վրաստանի էկզարխի կողմից եկած Գրեգորի Եպիսկոպոսին՝ որպէս մեծ ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչ, որ մասնակցեց քոյր եկեղեցուն հասած վշտին, շնորհակալութիւն յայտնեց օտարերկրեայ պատգամաւորութիւններին:
Հետագիւրներ ստացվել են աշխարհի բոլոր կողմերից, թուով 230:
Թիւրքմանյեի կողմից Հ. Առաքելանը յայտնեց խորին վշտակցութիւնը Գրեգորի Եպիսկոպոսը ուղղափառ եկեղեցու կողմից և սենյակատիր Վատացին կառավարութեան կողմից յայտնեցին ցաւակցութիւն:
II
Էջմիածին, 20 դեկտ. 8 ժամ 25 ր. առ:
Գրեգորի Եպիսկոպոսը, բերն ներկայացուցիչ վրաց հնազանդ եկեղեցու, արտասանեց ճառ, որի մէջ յայտնեց, թէ բոլոր առաքելական եկեղեցիների ձգտումն է կազմել մի ընդհանուր քրիստոնէական եկեղեցի, վրաց եկեղեցին բաժանում է հայկական հնազանդ եկեղեցու վիշտը, եպիսկոպոսը յայտնում է վշտակցութիւնը Գրեգորի Լուսաւորչի եկեղեցուն, որի յիշատակը օտնում է և ուղղափառ եկեղեցին:
Կային պատգամաւորութիւններ զանազան քաղաքների կողմից, օրինակ թիֆլիսի, Բազումի, Նոր-Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Երևանի:
Պատգամաւորութիւններ և հիւրերը վերադառնում են իրանց տեղերը:
Հ. Առաքելան

զանազան անձերի, նաև հայկական ժողովարանի, որոնք պարեն ու նուազածութիւն անմիջապէս դադարեցրին:
Կիրակի օրը թերթերը հաղորդեցին Հայրապետի մահվան գոյժը, շատերը կենսագրականներով հանդարձ. նոր օրը տեղի ունեցավ հոգեւորական ներկայութեամբ հոգեհանգիստ, որի ժամանակ աղբի էին ընկնում նաև ուսուցիչականներ ու անձեր: Հոգեհանգիստը կատարվեց հանգուցեալ Կաթողիկոսի յիշատակին Մոսկվայի հայոց ս. Սահակեղեցու Բարեպետից Էմ. Բ. Նազարեան: Հոգեհանգիստից յետոյ տեղի ունեցավ ժողով ծիսականների և որդիների (ա) ընտրել պատգամաւոր գաղութի կողմից Լեւոն Մարգարեանին, բ) հանգուցեալ Հայրապետի դադարի վրա պսակ չը դնել, ի նկատի ունենալով, որ բոս հայ եկեղեցու կարգերի, հոգեւորականութեան վրա պսակ չը պիտի դրվի: Թէև ժողովը որոշեց նաև, որ եթէ այլ տեղերից լինեն պահակներ՝ մօտիկացի յետ չը մնան և իրանք ևս յաղթել պսակ դնելով հանգուցեալ յիշատակը: Որոշվեց նաև շաբաթ երեկոյան կատարել հանգիստաւոր հանգում և ապա հոգեհանգիստ, որից յետոյ սրբյ երեկոյթ, կիրակի թաղման օրը հանգուցեալ պատարագ մատուցանել և հոգեհանգիստան յիշատակի Դեկտեմբերի 14-ին տեղի ունեցավ հոգեհանգիստ ապա կերտութեան ցանկութեամբ Լազարեան ճեմարանում, որի պատուաւոր անդամ են հայրը և Հայոց Կաթողիկոսները: Ցուցադրական հեռագիր արվեց մանկավարժական մարմին կողմից վերաբնակչւթ պօթ. Միլիթեր ստորագրութեամբ տեղապահին:

Ներկայ համարի հետ ուղարկվում է Ռուսաստանի մեր բոլոր բաժանորդներին (բացի թիֆլիսի) «ԳԻՆԼԱՏՆՏԵՍ» շաբաթաթերթի փոխադրական բանկը:

Թատրոն «ԻԼԼԻԻԶԻՕՆ» Ս. Օ. Իվանիցկայայի

Վաղը, չորեքշաբթի, դեկտեմբերի 22-ին, ցոյց կը արվի սեփական նկար

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՆԸ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՄԱՏԹԵՍ Է ՈՍ ԻԻ-ի քաղումը

Այդ օրը ծրագրի լին փոփոխութիւն: Վերջին նորութիւններից ամենաաջոցն է, որ պարտական է ամենափոքրին երկու-երեք տարեկան օրվայ չափերից թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում:
(ա) 1405 1-1

Պատե ժուրնալ № 88-ը, թիւները օրվայ չափերից թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում:

(ա) 1405 1-1

ՀԱՆԳՈՒՆԵՆԱԿ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԻԶՄԻՐԵՆԻՆ ՄԵԾԱԿԻՐ 18 ԳՈՅՆԱԿ ԾԵԲԸ ՊԱՏԿԵՐԸ

Սանահին սրբազան հոյակապ դարաւոր կամարների տակ՝ մինչև նոր տարի հատը 3 ր. փոխարեն, ճանապարհածախսով, յատուկ խողովակներում

1 Բ. 20 Կ.

Այնուհետև հատը դարձաւ 3 ր.: Քրանիկը հատը մի կապոցով մինչև նոր տարի 25 ր.: Ցանկայի է, որ այս շրջի պատկերով իւրաքանչիւր հայի տունը զարդարվի:
Դիմել՝ ТИФЛИС, БЮРО ПЕЧАТИ. Елизаветинская, 39.
(հ.հ.կ.) 1386. 6-4

Դեղատոնային Մքերքների ԱՌԵԻՏՐԻ

Կովկասեան Ընկերութիւնը

յայտնում է ի տեղեկութիւն պ. պ. բժիշկների, դեղավաճառանոցատերերի և դրոգիստների, որ ինքն ստացել է

ԴՐՕՖԵՍՍՈՐ Է ՐԼԻԻԻ

ՍԱԼՎԱՐՍԱՆ

(ԷՐԼԻԻՆ-ՀԱԹԱՅՈՅ)

Բաց է թողնում ԳԼԽԱՌՈՐ ՊԱՆԾՍՏԻՑ, Եւսագուլովսկայա փող. սեփ. տուն, № 12.
(առ.) 1409. 1-1

Խմբագրութեան մէջ հաւաքված գրական նիւթերի մի մասը՝ շնորհիվ վերջին շաբաթվայ ընթացքում տեղի ունեցած եղելութիւնների՝ անկարող կը լինի տեղ գտնել «Մշակի» էջերում ներկայ ամսում, յոյս կը տեսնի միայն յաւիար և փետրվար ամիսներին:
Այդպիսի նիւթերի շարքին են պատկանում մատենագրական քննադատականները վերջին ժամանակ ստացված գրքերի մասին: Մենք ներկայ 1910 թվականին առանձին չազգրութիւն էինք նուրբը մատենագրութեանը և նորի մտադիր ենք անել առաջիկայ 1911 թվականին:
Նոյապէս նոր-տարվայ համարներին կը յետաձգվեն մի քանի խոշոր գրքեր, որոնք գեղարուեստական բովանդակութեամբ:
Մի քանի տեղերից մենք ստացել ենք բաժանորդագրաները փոխանակագրներով այնպիսի առևտրականներին անունով, որոնք թիֆլիսում չունեն:

Մեծագործ Մալխեան
Անգամներ՝ Ջաւահիրի, Սէլան Տէր-Գրեգորեան, Ալիադեան

Արեւելեան Հնդկաստանի Ռանգուն քաղաքից Համբարձում քահանայ հեռագրում է դեկտ. 17/30-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան տարիթով. «Բուրձայի հայերը ողբում են Իգնիլոսյան Հայրիկի մահը»:
(Հետադրով)
Այսպիսով, 18 դեկտ. ցերեկ. 4 ժ. 2 ր. Կ. Հ. Բարեպետական Ընկ. Այսպիսով, ճիշդ հեռագրեց Էջմիածին Ս. Յարութեան հեռագիր լինել նրա ներկայացուցիչը Նորին Սրբութեան թաղմանը:
Նախագահ Կարապետեան
Քաղաքագր՝ Շէխաբան

Մոսկվայից մեզ գրում են. «Մատթեոս Հայրապետի անկնկալ մահը շատ ցնցող տպաւորութիւն գործեց Մոսկվայի հայ գաղութի վրա: Դեռ շաբաթ երեկոյան մեզ յայտնեց քոյր ցաւով լուրը, որոնք թերթի խմբագրութիւնները յայտնել էին:

Երկուշաբթի, դեկտեմբերի 13-ին, Բագուի հայոց եկեղեցում տեղի ունեցավ հանդիսաւոր պատարագ, որից յետոյ հոգեհանգիստ կատարվեց ի Տէր հանգուցեալ Մատթեոս II Ամենայն Հայոց Կաթողիկոսի համար: Արդէն 12 ժամին մօտ տաճարի շուրջը գտնվող բոլոր տեղը լցված էր բազմաթիւ հասարակութեամբ: Բոլոր խաւերի ներկայացուցիչները Տաճարը լցված լինելու պատճառով 12 ժամից յետոյ ներս էին թողնում միայն պատուաւոր անձանց հայրիկի և այլ ազգերի ներկայացուցիչներին: Պատարագին և հոգեհանգիստին ներկայ էին Բագուի հանգուցեալ կամեղեցի Ալիշէլսկի, քաղաքագետի օգնական Վ. Ա. Բովնակով, քաղաքագետի գիւտատան կառավարի Ումիսեյեֆ, ուսմիականագետի օգնական Բոտմիստր Նազանսկի, քաղաքագրու Ն. Վ. Բանիկով, հասարակական-քաղաքական Կորսակով, քաղաքային վարչութեան անդամներ Դ. Դ. Յարութեան, Մ. Գ. Գալիսկի, Բեմովը բեզ Սաֆարալիով, ժողովրդական դպրոցների դիրեկտոր Ճիւրժէվսկի, ժողովրդական դպրոցների տնօրէններ Կոպեշէլով և Գրանիկով, առևտրական դպրոցների դիրեկտոր Տակուսկով, ներկայացուցիչ ուղղափառ հոգեւորականութեամբ՝ առաջ քահանայ Օ. Ռեյնիկով, ներկայացուցիչներ հրեական հասարակութիւնից՝ Բաբայի Բ. Բեզգեր, Իշկովիչ և Գիւտաբուրդ: Հայոց Մարդասիրական Ընկերութեան նախագահ, Հ. Բ. Տէր-Միքայէլեան, Տիւնիսիական Ընկերութեան և Հայոց Կաթողիկոսական Միութեան նախագահ Կ. Բ. Ստարոսեան, համարեա բոլոր հայ ձայնաւորները, փաստաբանները, բժիշկները և այլ անձինք: Կային նաւթահանքերից եկած քաղաքական և մասնաւոր շատ ազնկաւորներ: Բաղախնիք յատկապէս հոգեհանգիստին եկան հասարակական-քաղաքական խորհրդ:

դի դպրոցները հայ սանձերը Եկեղեցի բեր-
վեցին նորայն հայոց իրական դպրոցների
սանձերը և ս. Նինայի իրական դպրոցի հայ
աշակերտները, շատ կային և գիմնա-
զիանի ու ընտանեկան դպրոցի աշակերտները:
Տաճարում ամբողջ ժամանակը կարգը օրի-
նական էր, որ կարելի է վերագրել միայն
Հ.ՏԵՐ-Միքայելյանի հետադուր կարգադրու-
թիւններին: Հոգեհանգստից յետոյ Ներսէս
վարդապետ ՏԵՐ-Միքայելյանը խոսեց հան-
գուցեալ Մատթէոս Կաթողիկոսի յիշատա-
կին՝ ընտրելով նրան որպէս հաստատ հա-
մոզմունքների տէր և ամուր ընտարութիւն
ունեցող մարդու: Հոգեհանգստը վերջացաւ
ցերեկվայ 1 ժամ 15 րոպէին: (ՅԱՅԿՅ)

Գանձակ, 16 դեկտեմբերի
Ամսիկ 11-ին, շաբաթ երեկոյան, Վեհա-
փառ Կաթողիկոսի մահվան օրօրները հեռա-
գիրը ստանալուն պէս, փոխանորդ տէր
Լևոն վարդապետի կարգադրութեամբ ժամը
7-ից ս. Յովհաննէս առգծ եկեղեցու գան-
գակների ղոյճանիւնով յայտնի դարձաւ տը-
խուր դէպքը հայ հասարակութեան:

Հետեւեալ օրը, կիրակի ս. պատարագին
ս. Յովհաննէս եկեղեցում մեծ քաղաքութեան
էր հաւաքվել: Ուր տէր Լևոն վարդապետը
մի երկար և զգացված ճառով քաղաքից
Էջմիածնի և նրա գահակալների անցնալու-
նում կատարած մեծ դերը հայտնեցին ան-
դաստանում: Նորիս կենտրոնանալով Վեհ
հափառ Մատթէոս Կաթողիկոսի վարժապետ
և անպայման մահվան վրայ, հայ փո-
խանորդը ասաց, որ նրա արածով մահը
ներկայ պայմաններում աստ ցաւայի եւզգա-
լի է հայ ընտանեկան համայն: Տաճ
տէրը այլևս չէ կայ, նա զնալ ըր յաւիտե-
անական տունը, իսկ տան աշխատանքի վրա
լինի հոգեհանգստի թէ աշխատանքի, սպասել
պարտք կայ մի ժամկէտ և մի սիրտ ու
մի հոգի դարձած եկեղեցու քաղաքաւածան
ու առաջակիցութեան մասին մտածել:
Վերջում աշխարհից, Վեհափառը Ստուա-
մը, որ միշտ օգնութեան է հասել հայերին
թշուառութեան ծանր օրերում, բարեմաղ-
թեանը, որ այս անգամ եւ օգնութեան դաս
հասցնելով թափուր միացած գահին մի ար-
ժանաւոր գահակալը: Հայր-սուրբի ճառը լաւ
տպաւորութիւն թողեց ունկնդիրների վրա:

Նոյն օրը քաղաքագլուխ Աղլիկան Ջիւստ-
իանովը այցելելով հայ փոխանորդին,
յայտնեց իր խորին ցաւակցութիւնը: Այդ
օրը ցաւակցական հեռագիր ուղարկվեց հա-
յերի կողմից տեղակալին, իսկ երեկոյան
ս. Յովհաննէսում կատարվեց առաջին ան-
գամ հոգեհանգստի հոգեհարկանքների և մեծ
բազմութեան ներկայութեամբ, փոխանորդը
դարձաւ դամբանական խօսքի:

Տէր Եփրեմ եպիսկոպոսի կարգադրու-
թեամբ մինչև թաղման օրը, ամբար 19-ը
երեկոյանը հանգիստուր հոգեհանգստի տէր
պէտք է կատարվեն քաղաքի եկեղեցիներ-
ում:

Իսկ փոխանորդ Լևոն վարդապետի կար-
գադրութեամբ, քաղաքի բոլոր ծխական
դպրոցներում, ի նշան սուգի, դասերը երեք
օրով դադարեցվել են: Աշակերտ-աշակեր-
տուհիները իրանց դաստիարակներով յա-
ճախում են հոգեհանգստի տեղին:

Երկուշաբթի, ցերեկվայ ժամը 12-ին, օ-
րերուց զգիմազիւտում սուտուր Պ. Ի.
Պոլեակովի և կառավարչուհի Ն. Մ.-ի կար-
գադրութեամբ հայ փոխանորդը՝ մասնակ-
ցութեամբ Գրիգոր ա. ք. Թուսմանանի և
կրօնուսոյց Շմաւոն քահ. Բոքանի, ներ-
կայութեամբ սանտիկների և դաստիարակ-
ների, դպրոցի ղաղկման հանգիստուր հո-
գեհանգստի կատարեց: Արժանապատիւ
հայերին թէյով մեծարեցին:

Երեկոյան, եկեղեցում, հոգեհանգստի
խօսքը Գր. ա. քահ. Թուսմանանի, քա-
ցատրելով հայ եկեղեցու գահակալների նը-
շանակութիւնը:

Նոյն օրը երեկոյան յալորդարանում
ժողովականների կողմից թաղմանը ներկայ
լինելու համար ներկայացուցիչներ ընտը-
րեցին Մովսէս Մեխակոյանը և հարկա-
յին տեսելով Աղալան ՏԵՐ-Մատթէոսը, յանձ-
նարարվեց պառկ դնել:

Երեքշաբթի, հոգեհանգստի, հայ փոխա-
նորդը թեյը հանգուցաւ Վեհափառ Հայր-
ապետի կենսագրութիւնը, իսկ երեկոյան
դուռայի ղաղկման նախ քան երեկոյան
հարցերին անցնելը քաղաքագլուխ Աղլիկան
Ջիւստիանովը Վեհափառի մահվան տխուր
լուրը յայտնելով՝ առաջարկեց հանգուցեալ
Հայրապետի յիշատակը յարգելու համար
ոտքի կանգնել. ներկայ եղող բոլոր ձա-
նաւորները ընդունելով առաջարկութիւնը
խիստ ոտքի կանգնեցին, ապա թաղմանը
ներկայ լինելու համար առաջարկվեց քա-
ղաքի կողմից ընտրել երկու ներկայացու-
ցիչներ. ընտրվեց ձախուրը հարկա-
յին տեսելով Աղալան ՏԵՐ-Մատթէոսը, իսկ
միւս ներկայացուցիչը հաւանական է, որ
ինքը քաղաքագլուխը լինի:

Թաղման օրը հանգիստուր պատարագ և
հոգեհանգստի է լինելու ս. Լուսնայում,
իսկ 18-ին, շաբաթ երեկոյան, հոգեհան-
գստի ս. Յովհաննէսում, այս մասին փո-
խանորդ հայրը պաշտօնական ծանուցա-
գրեց և ուղարկել բոլոր քաղաքապետի
պաշտօնականներին և հիմնարկութիւններին:

Գանձակից
Չարջոյ (Անդրկասպ. երկիր), 14 դեկա.
Դեկտեմբերի 12-ին, երեկոյան ժամը
ուշիկ 9-ին Չարջոյի ծխատէր Գարեգին

քահ. Արեւանը ստացաւ Աստարիանի հա-
յոց կոնսիստորիայից այս օրօրները հեռա-
գիրը: Մերին Սրբութիւնն հանգեաւ ի ՏԵՐ.
Թաղումը 19-ին, այդ օրը՝ զինի պատա-
րագի կատարել հոգեհանգստի. Կաթողիկո-
սի անունը յիշատակել արթնեցրեւ մինչև
նորի հաստատութիւնը:

Հետեւեալ առաւօտ՝ շատ կանուխ, Չար-
ջոյի հայոց եկեղեցու գանգակները զօղա-
նում էին մեղամաղձու եղանակով: Ժամը
8-ին յայտնվեց տեղիս հայերին Վեհափառի
մահը, որի համար պէտք էր հոգեհանգստի
կատարել:

Հայոց դպրոցի հոգաբարձութեան նախա-
գահ Արգաթ Թաղբեանի ջանքերով քաղա-
պէս փակվեցին բոլոր խանութները ամ-
բողջ օրով, ի նշան համազգային մեծ սգի,
և ժողովուրդը աճապարեց եկեղեցի ժամը
11-ին կատարվեց հոգեհանգստի Վեհի հա-
մար, ժողովրդի խուռն բազմութեան ներ-
կայութեամբ: Հոգեհանգստից յետոյ ծխա-
տէր քահանայ ցաւակցութիւն յայտնելով
տեղիս հայերին Վեհափառ Կաթողիկոսի
անպայման մահվան մասին, յայտնեց
ստացած հեռագրի բովանդակութիւնը:

Ի նշան սուգի՝ հայոց դպրոցում 2 օրով
ուսումը դադարեցվեց: Վեհափառ երե-
կոյթի համար սկսված աշխատանքներն
նշանակաւ ընդհատվեցին:

Ժողովուրդը խոր սուգի ու վշտի մէջ է
Հանգիստ Վեհի քաղաքագլուխ Երեմի
Նորի:

Ախալքալաք, 15 դեկտեմբերի
Գորու դաւառի Արտաշէլը գիւղում ամ-
սիս 12-ին կիրակի, պատարագից յետոյ հո-
գեհանգստի կատարվեց Վեհափառ Կաթո-
ղիկոսի համար: Հոգեհանգստի ներկայ էին
հրաւիրւածը գործակալ հայր Միքայել
նախնի ժողովուրդը, հոգաբարձական կաթող
ուսուցիչները և աշակերտական խումբը:
Քիչ ինքնաճալութեան հոտած վիրա-
խօս հայը ողորմ է Վեհափառ Միքայել-
իանի՝ կորուստը: Հոգեհանգստի շարու-
նակում են ամեն երեկոյան. կատարվում
է նոյնպէս և այլ գիւղերում:

Յ. հ. Մ.

ՆՈՐ ՏԱՐԻՆ ԱՐՏԱՍՏԱՎԱՐՈՒՄ

Բերին, 19 դեկտեմբերի
Նոր-Տարվայ առիթով, պալատական
մատուռում հանդիսուր պատարագից
յետոյ, Սպիտակ զանդիւնով կայսրը
ընդունեց զեսպաններին: Փօս-դէր-Փոյ-
ցը նշանակվեց զհետախ-Ֆէլդմարշալ:
Վերոյ-Դէյուշ-Յայտնեցը՝ մի ակ-
նարկ ձգելով 1910 թվ. դեպքերի վրա,
Ռուսաստանի մասին գրում է. Երկրի
հանգստութիւնը խոտովութիւնների ժա-
մանակ եղած ցնցումներից յետոյ, շա-
րունակ աշխուժութիւններ ունեցաւ, միա-
ժամանակ չափազանց բարենպաստ
ձգուում գործարկվեց մաքրել աղմի-
նիստարացիան մի քանի զեղծումներից
և քայլ առ քայլ ամրապնդել դրութիւնը
քաղաքական և քաղաքական տեսակէտ-
ներից: Գեներալի քննութեան առաւելայ
Ֆինանսական հարցը լուծվել է այն
մտքով, որ ֆինանսական աւելի սերտ
է կապվելու պետութեան հետ» (Հ. Գ.):

Պարիզ, 19 դեկտեմբերի
Ելիսեան պալատում Նոր-Տարվայ
առիթով տեղի ունեցած ընդունելու-
թեան ժամանակ անդրկական դեսպան
Բերտին և նախագահ Փարիզը փոխա-
նակեցին ձառեւ, ըստ որում մասնա-
նիշ եղան թէ դիպլոմատիան շանք
էր գործ դնում յօդուռ չէզոք դատա-
րանի և 1910 թ. օդադնացութեան ա-
շխուժութեան:

Քաղաքում լիակատար հանդիսու-
թիւն է: (Հ. Գ.):

Հոռո, 19 դեկտեմբերի
Տոր-Տարվայ ընդունելութեանը ներ-
կայ էր թագուհին ձեռքը կապած, և
պատմեց թէ երեկ պալատում ընկաւ
սանդուղքները և թիթիկ փառեց ձեռ-
քի թաթը և ոտքը: Այսօր թագուհին
բոլորովին առողջ է: (Հ. Գ.):

ԹԻՒՐԻՍ, ԵՒ ՊԱՐԻՍՈՍԱՆ

Կ. Պոլիս, 19 դեկտեմբերի
Պալատը քննեց 13 պատգամաւոր-
ների հարցապարտութիւնը ներքին գործերի
մինիստրին ուղղված՝ անցեալ տարի
պատգամաւոր Ռիզա-Նուրիին ձեռքակա-
լելու մասին և այդ ձեռքարկութեան
համար պարտաւանդական քննութիւն
նշանակելու առաջարկութիւնը: Հար-
ցապարտումը առաջինը ստորադրած
Լուիֆֆի-Ֆէլդերն պահանջում է քննել
պատերազմական դատարանների ամ-
բողջ գործունէութիւնը, միւղարկելով նը-
րանց խստութիւնները գործարարելու և մե-
ղադրեաներին տանջելու մէջ: Նա նկա-
րագրում է տանջանքների մանրամաս-
նութիւնները, ցոյց է տալիս մահա-
կան, մարմինների, մեղադրողներից
պոկված եղունգները: Վէճերը մատ-
նանշում է, որ Ռիզա-Նուրին միջադէպը
արդէն քննվեց և հրաժարվում է առաք-
ելի ըստ էութեան:

Բազմութիւն ձառերից յետոյ 96 ձա-
յնով, ընդդէմ 73-ի հարցապարտումը

մերժվեց. 60 հոգի ձեռնադաճ մնացին:
(Հ. Գ.):

Թաւրիզ, 19 դեկտեմբերի
Գեներալ-Նահանգապետի դէմ աղի-
տացիա մղող գործադուրի ֆէդայիներ-
ը և մոլանները համախմբվեցին մուշ-
տէիլ և շուրմա մզկիթներում: Գեներա-
նահանգապետի ցրելու մասին արած
կարգադրութեանը պատասխան տրվեց
մերժումով: Հրամանները երկարվեց
վիրաւորանքներին: Ազդեցութիւնները պա-
հանջում են զեն-նահանգապետին փո-
խարկելու նախկին մինիստր Վուսա-
ուլ-Դոյլեյով: Գեներալ-նահանգապետը ա-
պարդին շանք գործ դրեց ձեռքակա-
լելու շարժման պարագլուխներին: Նը-
րան մահ են սպառնում, եթէ նա չու-
սով չը հեռանայ Թաւրիզից: (Հ. Գ.):

Բաքու, 19 դեկտեմբերի
Գանա պարսիկ աւազակները, յար-
ձակվելով Լէնքորանի գաւառում Զրա-
դացի վրա, կողոպտեցին այնտեղ
գտնվող գիւղացիներին և անյայտացան
Պարսկաստանում: Բանանապահ պա-
հակամբի հետ հրացանաձգութիւն
ունենալուց յետոյ: (Հ. Գ.):

ՎԵՐՔԻՆ ՏԵՂԵԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Օդեսա, 18 դեկտեմբերի
Քաղաքապետը ձեռքարկեց ուժ օ-
րով 20 ուսանողների, փողոցներում
համախմբելու համար, 10 ուսանող-
ների տաս օրով ոստիկանութեան գոր-
ծողութիւններին միջամտելու համար:
(Հ. Գ.):

Հելսինգֆոր, 18 դեկտեմբերի
Վաղը գործադուլ են անելու տպա-
րանայան բոլոր բանաւորները: Բոլոր
լրագիրները յայտնեցին, որ լոյս կը
տեսնեն կամաւոր գործարարների մաս-
նակցութեամբ: (Հ. Գ.):

Հելսինգֆոր, 19 դեկտեմբերի
Տպարանական գործադուլ անող բան-
ւորների փոխարինեցին տիկիները և
այն տղամարդիկ ինտելիգենցիայի մի-
ջից, որոնք վերջին շաբաթը պատ-
րաստով էին այդ աշխատանքի հա-
մար: (Հ. Գ.):

Պարիզ, 18 դեկտեմբերի
Գեներալ, 10-15 Ժողովուրդներում
ժամադարութիւն մեռան 112 մարդ: (Հ. Գ.):

Պարիզ, 18 դեկտեմբերի
Բրիտան առաջարկեց ոստիկանապե-
տին, ի նկատի ունենալով որ յուն-
վարի 1-ին ցոյց է կազմակերպվում,
ձեռք անել խառնուրդ միջոցներ: Փո-
ղոցային ցոյցերը թոյլ չեն տրվի:
(Հ. Գ.):

Պարիզ, 19 դեկտեմբերի
Գեներալի մահապատիժը փոխարին-
վեց 7-ամսեց բանտարկութեամբ:
Միլիտանտների միութեանը, յետա-
ձգելով Ելիսեան պալատի առաջ կա-
տարելի ցոյցը, առաջարկում է բան-
ւորական կազմակերպութիւններին մի-
ջոցեք ձեռք անել պատրաստելու
ընդհանուր գործադուլ, որպէսզի հայ-
կաբերն վերադնեն տալ Դիւանի դա-
տաւարութիւնը: (Հ. Գ.):

Բերլին, 18 դեկտեմբերի
Վերէյմ կայսրը իր հովանաւորու-
թեան տակ առաւ միլիարդէր Գարնէ-
շի հիմնած այն ընկերութիւնը, որ
նպատակ ունի աշակցել կենսը փրկող-
ներին: (Հ. Գ.):

Բիւլ, 18 դեկտեմբերի (Վէրսալի մօտերը)
Օղազնայ Տարիւտան հաստատեց
նոր մրցակէտ հեռաւոր տարածութիւն
անցնելու համար: 584 կիլոմետր տա-
րածութիւնը նա թուաւ 7% ժամում:
(Հ. Գ.):

Վիեննա, 18 դեկտեմբերի
Ֆրանց-Յովսէփ կայսրը յանձնեց
մինիստր-Նախագահին կազմել նոր կա-
բինէտ: (Հ. Գ.):

Բուդապէս, 18 դեկտեմբերի
Լրագիրները ոգևորութեամբ ըննա-
դատում են դահաժտանքին առած
խօսքերը: (Հ. Գ.):

Վիեննա, 19 դեկտեմբերի
Հրատարակված է, թէ կայսրը թե-
թիւ հարուստ ունի: Ոչ մի երկր-
հիմը չը կայ: (Հ. Գ.):

Բելգրադ, 18 դեկտեմբերի
Վաճառելի դատարանը հաստատեց
Վանալի գործի առիթով կայացված
դատաւճիւրը: (Հ. Գ.):

Սոֆիա, 18 դեկտեմբերի
Ջիւստիսական նախկին մինիստր Սա-
վովը շարունակեց բացատրութիւններ
տալ և հինգ ժամ ձառնելով հերքեց մե-
ղադրանքի բոլոր կէտերը: Վերջում նա

մատնանշեց բացառիկ հանգամանքների
և վտանգի վրա, որին ենթարկվեց եր-
կիրը, երբ իշխանութիւնն անցաւ
ստամբուլցիներին առաջնակարգէտին,
այն ժամանակ թիւրքի մտադրվեց
յարձակվել Բոլաբադի վրա առանց
պատերազմ յայտարարելու: Զօրը
զրկված էր պատերազմական միջոց-
ներից, հարկաւոր էր նրանց ձեռք բե-
րել անյայտադ: Նա գերադասեց մի
փոքր միաս պատճառել պետական գան-
ձարանին, քան երկիրը վտանգի մէջ
դնել: Մի քանի ամսում զօրքը զրկեց
իր կոչման բարձրութեան վրա: Շնոր-
հիւ Թիւրքիայի կառավարութեան ստեղ-
ծած դիւստրական հզօրութեան, Բոլ-
գարիան ձեռք բերեց անկախութիւն:
(Հ. Գ.):

Սօֆիա, 19 դեկտեմբերի
Ազգային ժողով: Նախկին մինիստր
Գեներալները պարզում է այն պատ-
ճառը, թէ ինչու դադարեց պաշտօնա-
կան անձնաց օրէնքը, որ յետոյ ըն-
դունվեց ժողովից 1903 թ.: Կառավա-
րութիւնը անկարող եղաւ գումարել
պալատը, որպէսզի ստիպված չը լինի
խնդրել բիւջէից դուրս 25 միլիոն
յատկացնել զօրքի կարիքների համար:
Կառավարութիւնը այդ միջոցը պէտք
է գաղտնի պահէր, որպէսզի Բոլաբա-
դիայի սպառազինման մասին յայտնի
չը լինէր մինչև զինման աւարտումը:
Գնդիչ մասնագիտովի անգամ Դանի-
ւովը արդարացեց մասնագիտովի գոր-
ծողութիւնները և ապացուցեց դատա-
րանին յանձնված մինիստրների յա-
ցանքը: (Հ. Գ.):

Մադրիդ, 19 դեկտեմբերի
Կառավարական ծրագրի առաջին
մասի իրականացումը տեսնելուց յե-
տոյ մինիստրների խորհուրդը որոշեց
հրաժարական տալ: (Հ. Գ.):

Մադրիդ, 19 դեկտեմբերի
Թագաւորը նորից վստահութիւն
յայտնեց կանալիստին և լիազօրու-
թիւն տուեց փոփոխութիւններ մը-
ցնել կարէնէտում: (Հ. Գ.):

Մադրիդ, 18 դեկտեմբերի
Կառավարութիւնը ոչ մի տեղեկու-
թիւն չէ ստացել Օրտուգալայի ան-
կարգութիւնների մասին: (Հ. Գ.):

Լիւսաբոն, 18 դեկտեմբերի
Արտաքին գործերի մինիստրը յայտ-
նեց արտասահմանեան մամուլի ներ-
կայացուցիչներին, որ երկրում լիա-
կատար հանգստութիւն է, ընտրու-
թիւնները տեղի կունենան ապրիլին և
կանցնեն առանց կառավարութեան
ճնշման: (Հ. Գ.):

Պէլզի, 18 դեկտեմբերի
Կայսերական հրովարտակով կտրա-
կանաւոր մերժեց սահմանադրական
պալատի միջնորդութիւնը ժամերը վե-
րացնելու և զգեստի ձևը փոխելու մա-
սին: (Հ. Գ.):

Ելաւո, (Տէխաս) 18 դեկտե.
Ջիւրիստական տեղեկացնում են,
որ կառավարական զօրքերը ապստամբ-
ների հետ չորս ժամ կուրկուց յետոյ
կորցրին 600 մարդ: (Հ. Գ.):

ՍՖՊՈՐՈՐ ՂՈՅԻՆՆԵՐԻՍԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Կիրակի, դեկտեմբերի 19-ին, երբ Էջմի-
ածնում հողին էր յանձնվում ազգանոր
Կաթողիկոս Մատթէոս Բ. Իգլորեանի
մարմինը, այստեղ Թիֆլիսում Վանքի
առաջ եկեղեցում կատարվում էր հանդիսա-
ւոր հոգեհանգստի նոյն այդ ժողովրդական
Հայրապետի համար:

Իայն նկարագրեց եղածը յալորդաբար:
Վաղ առաւօտից ժողովրդի անհամար
խմբեր սկսեցին դիմել դէպի Վանքի եկե-
ղեցին, որի զարգացման մօտ կանգնած էին
կարգադիր Մասնագիտովի կողմից նշանակ-
ված երիտասարդները Յ. Շանաւարեանի
հակողութեան ներքոյ և ոստիկանութեան
կողմից եկած ոստիկանները: Վերջինները
աշակցում էին կարգադիրների կարգա-
դրութիւններին:

Ժողովրդի մուտքը ազատ էր դէպի բազի-
որ և շուտով լցվեց զուլմների ծովով: Դար-
բասի և եկեղեցու մուտքի միջև թաղմ

